ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1956 Общественные науки

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Պ. Սիմոնյան

ԱՂԱՍԻ ՇԱՀԻՆՅԱՆ

Աղասի Շահինյանը պատկանում է ռևոլյուցիոն այն գործիչների թվին, որոնք պայքարեցին հանուն սովետական կարգերի հաստատման մեր երկրում և ընկան այդ սրբազան կռվում։ Նա մի անձնավորություն է, որն իր արժանի տեղը պետք է ունենա հայ ժողովրդի սովետական շրջանի պատմության մեջ։

Չնայած դրան՝ նրա մասին համարյա ոչինչ չի գրվել, անգամ հայտնի չէ նրա կենսագրությունը։

Աղասի Շահինյանի ռևոլյուցիոն գործունեության վեր հանումը թողնելով մեր պատմաբաններին, մենք ցանկանում ենք հիմնականում արխիվային փաստերով շարադրել նրա համառոտ կենսագրությունը, որն անշուշտ կօգնի Շահինյանի կյանքը ուսումնասիրողներին։

* * *

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրական թանգարանում Հ. Հակոբյանի և բանաստեղծուհի Շ. Կուրղինյանի հարուստ ֆոնդերում պահպանվում են Աղասի Շահինյանի գրչին պատկանող և նրան վերաբերող մի քանի կարևոր և ուշագրավ փաստաթղթեր։ Դրանցից են՝ նրա համառոտ կենսագրությունը[1] գրված ռուսերեն, այնուհետև Հ. Հակոբյանի հուշ-հոդվածները՝ գրված Ա. Շահինյանի մահվան տարեդարձների առթիվ։ Առաջին հոդվածը՝ «Ընկեր Աղասի Շահինյանի նահատակման տարեդարձին»[2], առաջին անգամ լույս է տեսել «Նոր ուղի» 1920թ. մարտի համարում երկրորդը՝ «Լենինականի առաջին կոմունիստ ընկեր Աղասի Շահինյանին» (նրա հերոսական մահվան հիշատակին[3], և երրորդը՝ «Ա. Շահինյանի պատկերը տասնամյակի առթիվ»[4] անավարտ մի սևագրություն։

Թված հոդվածներից բացի, Շահինյանը 9 նամակներ ունի՝ գրած բանաստեղծուհի Շ. Կուրղինյանին և վերջինիս ամուսնուն[5]՝ 1909—13 թվականների ընթացքում։ Կուրղինյանի անձնական արխիվումն է պահվում նաև Շահինյանի Պետերբուրգում ուսանող եղած տարիների լուսանկարը հեղինակի ընծայականով «Շուշանիկիս և Արշակիս 1911 թ.» և նրա

---

[1] *Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարան, Հ. Հակոբյանի արխ., № 186։*

[2] *Նույն տեղում, № 116։*

[3] *Նույն տեղում։*

[4] *Նույն տեղում։*

[5] *Նույն տեղում, Շ. Կուրղինյանի արխ., № 149—237։*

ընակավայրի, «Լենոյ պարկի» նկարը, որտեղ տեղի էին ունենում ուսանողական գաղտնի ժողովներն ու դիսկուսիաները։

Մեր ձեռքի տակ չունենալով Շահինյանի ընդարձակ կենսագրությունը և լրացուցիչ տվյալներ՝ նրա ռևոլյուցիոն գործունեության մասին, աշխատել ենք այն մասամբ ամբողջացնել այլ աղբյուրներից։ Այս հարցում մեզ օգնել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատող Ա. Կարինյանի անտիպ հուշերը։

Աղասի Գևորգի Շահինյանը ծնվել է 1889 թվականի հունիսի 26-ին (հին տոմարով) Ալեքսանդրապոլում, այժմ Լենինական։ 1906 թ. ավարտում է տեղի առևտրական ուսումնարանը և նույն թվականի աշնանը գնում Շվեյցարիա, մտնում Նեշատելի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը։ Դեռևս ուսանողական տարիներից նա մեծապես հետաքրքրվել է ռևոլյուցիայի առաջնորդներ Մարքսի, Էնգելսի, Լենինի գաղափարներով։ Ընկեր Կարինյանը իր անտիպ հուշերում գրում է. «Շվեյցարիայում ուսանելիս մասնակցել է որպես ունկնդիր Ժնևյան ժողովներին, լսել այնտեղ Լենինի ու Պլեխանովի զրույցները, ուսումնասիրել ականավոր տեսաբանների աշխատությունները»[1]։

Սակայն, ուսումնածարավ երիտասարդն իր նպատակին չի հասնում։ 1908 թվականին, նյութական ծանր կացության պատճառով թողնում է համալսարանը և վերադառնում ծերացած ծնողների մոտ։ Միայն մեկ տարի հետո 1909 թվականին ուղևորվում է Պետերբուրգ՝ ուսումը շարունակելու պսիխո-նևրոլոգիական ինստիտուտի իրավաբանական ֆակուլտետում, որտեղ և մնում է մինչև 1914 թվականը։

Հաղթահարելով տնտեսական ու քաղաքական բոլոր տեսակի դժվարությունները, ստոլիպինյան ռեակցիայի օրերին Շահինյանն ակտիվ մասնակցություն է ունենում Պետերբուրգի ուսանողական ռևոլյուցիոն շարժումներին, ժողովներին, միտինգներին և դիսկուսիաներին։ Հաճախ հլույթներ է ունենում այդ դիսկուսիաներում։ Կուրդինյանին ուղղված իր նամակներից մեկում գրում է. «Ա՜խ, երբ ախր մինչև ե՞ր սպասել, որ այդ ասածդ վառ արևը ծագե, ախր երբ պիտի հալածվի այդ մշուշը, երբ պիտի քար ու քանդ լինի այս դժոխքը։ Ախ, կանչիր, կովի կանչիր, կովի երգեր հնչեցրու, թափով, ուժեղ...։ Ա՜խ, ջլուտ բազուկները երբ պիտի նորից պարզվեն քար ու քանդ անելու համար, երբ պիտի նորից ծածանվի կարմիր դրոշը»[2]։

Քաղաքական պրակտիկ հարցերին զուգընթաց նա հետաքրքրվում է նաև գրականության, արվեստի ու կուլտուրայի հարցերով և իր ակտիվ վերաբերմունքն է ցուցաբերում գրական այս կամ այն հարցի լուսաբանման խնդրում։

Շահինյանը ամենից շատ հետաքրքրվում է ռուս գրականությամբ, կարդում ժամանակի առաջավոր գրողներին, հաճախակի ընկերների հետ զրուցելիս, վեճի առարկա դարձնում այս կամ այն գրողի ստեղծագործությունը։ Կուրդինյանին գրած իր մի նամակում, խոսելով Մ. Դորկու մասին, գրում է. «Դու անիրավացի ես ոչ միայն Մարիետա Շահինյանի վերա-

[1] Ա. Կարինյան, Անտիպ հուշեր, էջ 269։
[2] Գրական թանգարան, Շ. Կուրդինյանի արխ., № 249, 1909։

բերմամբ, այլև Գորկու նկատմամբ Դու շտապել ես համաձայնվել (տնարույս) այն քննադատների հետ, որոնք հայտարարում են, թե Գորկին ընկել է, եթե նա աշխատակցում է բուրժուական թերթերին, դա ապացույց չէ, թե նա «թևերը քսում է գետնին», գուցե, նա թևերը առաջվա նման ուժեղ չի թափահարում, բայց ցեխոտվելուց շատ հեռու է, ոուս պրոլետարիատը կարոտ է նեցուկի, գրում ես դու, բայց մոռանում ես, որ ինքը (Գորկին) նույնպես ծարավ է սննդի, նա կտրված է իրեն սնուցանողի, նույն պրոլետարիատի կրծքից, ուստի մեղավոր չէ, որ թևերը թուլացել են։ Նրա մեջ կատարվում է մի ծանր հոգեկան դրամա»[1]։

Ա. Կարինյանն իր անտիպ հուշերում հետևյալն է գրում իրենց զրույցների մասին։ «Մեր հանդիպումների ժամանակ մենք վիճում էինք կարդացած գրքերի, վեպերի, Անդրեևի պիեսների, սիմվոլիստների մասին և դատափետում դեկադենտներին։ Ամենասիրելի պոետն այդ օրերին Նեկրասովն էր։ Հայ գրականության և մանավանդ պոեզիային մենք մոտենում էինք ոուս առաջավոր գրականության դաղափարական դիրքերից»[2]։

1914 թվականին սկսվում է համաշխարհային պատերազմը և հենց այդ տարին Շահինյանը ինստիտուտը չավարտած ընդունվում է աշխատանքի Մոսկվայի բարեգործական ընկերության Ալեքսանդրոպոլի բաժանմունքում (գաղթականների մեջ)։ Մեկ տարի հետո, 1915 թվականին աշխատում է համառուսական քաղաքների միության Թիֆլիսի բաժանմունքի բակտերիոլոգիական ջոկատում, որտեղ նա եռանդուն կերպով շարունակում է զբաղվել պարտիայի գաղափարները տարածելու գործով։ Այստեղ աշխատում է մինչև հիմնարկի լիկվիդացումը 1916 թվականի դեկտեմբերը։

1917 թվականին Շահինյանը բուռն ցանկություն է ունենում նորից Պետերբուրգ գնալու ավարտական քննությունները հանձնելու համար։ Այդ նպատակով էլ նույն թվականի ապրիլի 1-ին գնում է Ռուսաստան և այնտեղ մնում ընդամենը երկու ամիս։ Վերադառնալով Թիֆլիս՝ պարտիայի կողմից առաջադրանք է ստանում գնալ Բաքու պարտիական աշխատանք տանելու համար։ Մինչև 1918 թվականը աշխատում է Ստ. Շահումյանի մոտ արտակարգ կոմիսարիատում որպես իրավաբան։

Պարտիական առաջադրանքները կատարելու ժամանակ հիվանդանում է տիֆով և մի քանի ամիս ոատ ծանր վիճակում պառկում հիվանդանոցում։ Դեռ լրիվ չառողջացած դուրս է գալիս հիվանդանոցից, գնում հանքային ջրեր—Կիսլովոդսկ բուժվելու։ Հնարավորություն չունենալով այնտեղից վերադառնալ, մնում և աշխատում է Վլադիկավկազի արտակարգ կոմիսարիատում մինչև իր ողբերգական վախճանը։

1918—1920 թվականներին սկսում է օտարերկրյա ինտերվենտների արշավանքը—քաղաքացիական կռիվները։

Ռևոլյուցիայի կողմից ջախջախված կոնտրռևոլյուցիոն պարտիաները՝ էսերները, մենշևիկները և սպիտակ գվարդիականները դավադրություններ էին սարքում Սովետական Միության դեմ, տեռոր էին կազմակերպում սովետական գործիչների դեմ։ Հենց այդ տարիներին, 1919 թվականի սկզբին,

[1] Գրական թանգարան, Շ. Կուրղինյանի արխիվ, № 254։
[2] Ա. Կարինյան, Անտիպ հուշեր, էջ 277։

երբ Վլադիկավկազը վտանգի տակ էր, Հ. Հակոբյանը, որն իր աշխատանքն արդեն ավարտել էր և Թիֆլիս էր վերադառնում, խնդրում է Շահինյանին իր հետ Թիֆլիս վերադառնալ, նա հրաժարվում է։

«—Չեմ կարող, պատասխանեց նա, ես նշանակված եմ հեղափոխական տրիբունալի նախագահ և պիտի մնամ»։

Եվ երբ 1919 թ. փետրվարին Կարմիր բանակը թողնում է Վլադիկավկազը, Շահինյանը մնում է այնտեղ, նպատակ ունենալով Ռուսաստան ուղևորվել ռևոլյուցիոն գործունեությունը շարունակելու համար։

Մի քանի օր հետո, հարևանների կողմից մատնվում է և ձերբակալվում։

1919 թվականի փետրվարի 17-ին, սպիտակ գվարդիականների ձեռքով, Վլադիկավկազում սպանվում է Աղասի Շահինյանը։

Նրա տրագիկ վախճանի մասին Հակոբյանի հուշերում հետևյալն է ասված.

Պատասխանատու ընկերներից մեկը, որպես ականատես պատմում է, որ դենիկինցիները ձերբակալում են Աղասուն և երկար տանջանքից հետո գնդակահարում ու դիակը թողնում փողոցում։ Ականատեսի ասելով նրա դիակը երեք օր ընկած մնում է փողոցում, մինչև որ տեղի հայ քահանաներից մեկը վերցնում և հողին է հանձնում։

Ճշմարիտ խոսքի, վեհ ու մաքուր գործի համար իր կյանքը զոհեց Շահինյանը, Կոմունիստական փառապանծ պարտիայի պատմության մեջ թողնելով մի պայծառ հիշատակ։